ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ

Արարիչն Աստված, չգիտես ինչու, բարեհաճ չի եղել իրեն այդչափ հավատարիմ, մոլեռանդ հավատյալ հայ ժողովրդի նկատմամբ: «Պարգևատրել է» ոսոխների ասպատակություններով, բնական աղետներով, հատկապես՝ ամենակործան երկրաշարժերով: Դա բավական չէ, նաև շրջափակել է թշնամի հարևաններով, հայկական հողերի զավթիչներով: Այդ է պատճառը, որ երբեմնի Մեծ Հայաստանից փշրանքներ են մնացել...

Սակայն Աստված իր մեղքերը ինչ-որ չափով քավել է, «թույլ տալով», որ մեր տարաբախտ ժողովուրդն իր ծոցից շարունակաբար ծնի հրաշամանուկներ: Ինչպես ոսկեգրիչ Պարույր Սևակն իր իմաստուն «Վարք մեծաց» բանաստեղծության մեջ է նշել՝ «Մեծերը ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած, ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին: Եվ ժամանակից առաջ են ընկնում, դրա համար էլ չեն ներում նրանց»:

Այս խոհուն խոսքերը, իհարկե, կարելի է վերագրել նաև իրեն՝ Պարույրին: Սակայն բաժին են ընկնում նաև ուրիշներին: Դրանց թվին է պատկանում ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանը, ոչ սովորական հայորդին, որին միանգամայն սազական է «ֆենոմեն» (այսինքն՝ բացառիկ իրողություն, եղելություն, կամ՝ երևույթ) անվանումը:

Այլ կերպ չես կարող որակել նրան, երբ ձեռքդ ես առնում ու կարդում էսսեներով (Լևոն Հախվերդյանի կողմից հայերենացված՝ խոհագրություններով) լի «Կաքավաբերդի առեղծվածը» ժողովածուն, «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրված նրա «Կարմրավոր... կատարելության հարմոնիայի...» (14 հոկտ. 1999թ.), «Լեոնարդո դա Վինչին Հայաստանում» (19 ապր. 2000թ.) ու «Պալմիրա... իններորդ սիմֆոնիա, Բեթհովեն...» (27 մայիսի 2000թ.) խոհագրությունների նոր շարքը:

Հարկ եմ համարում նախ անդրադառնալ դրանց հեղինակին, քանզի, ինչպես ասվում է, նրան ճանաչում եմ իր խանձարուրից՝ ուսանողական տարիներից: 1942թ. գարնանը զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո ստանձնեցի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսմասվարի պաշտոնը, միևնույն ժամանակ դասավանդելով ճարտարապետության ամբիոնում: Ականատես եմ եղել ու հիացողը Գրիգոր Գուրզադյանի ուսումնառության շշմեցուցիչ արդյունքներով: Ընդառաջելով իր ցանկությանը, բացառության կարգով, նրան թույլատրվեց զուգահեռաբար կրթություն ստանալ երկու՝ շինարար-ճարտարագետի ու հիդրոշինարար-ճարտարագետի մասնագիտություններով: Նույն տևողությունն ունեցող քննաշրջաններում նա հանձնում էր քննություններ երկու մասնագիտությունների առարկաներից, որպես կանոն՝ գերազանցով: Դիպլոմային նախագծմանը հատկացված ժամկետում կարողացավ երկու դիպլոմային նախագիծ կատարել, երկուսն էլ պաշտպանեց գերազանց գնահատականով ու արժանացավ երկու դիպլոմների: Սա միակ դեպքն էր մեր ինստիտուտի պատմության մեջ: Երբ նրան ի սրտե շնորհավորում էինք, չգիտեինք, որ Գրիգորը միևնույն ժամանակ հասցրել է... ուսանել նաև Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական դպրոցում: Աշակերտել է շնորհաշատ նկարչուհի Մարիամ Ասլամազյանին, դարձել նկարիչ: Առիթներ եմ ունեցել հիանալու Գրիգորի նկարչական ստեղծագործությամբ, իր ջրաներկ ու գրաֆիկական նկարներով, որոնցով մեծապես օժտված են իր «Կաքավաբերդի առեղծվածը» գիրքն ու «ՀՀ»-ում լույս տեսած խոհագրությունները:

Հաճելի առիթ եմ ունեցել ծանոթանալու Գրիգորի նաև ընտանիքին՝ կրտսեր եղբոր՝ մեր կրթօջախի սան, ճարտարապետ Սարգսի հարսանիքին: Հրավիրվածների թվում էին Ավետիք Իսահակյանը, ճարտարապետ Սամվել Սաֆարյանը: Հայրը՝ ներգաղթած Արամն ու ընտանիքի մյուս անդամները հպարտ էին, որ սեղանը զարդարում է հայ քնարերգության նահապետը: Նա նորապսակներին իր խորիմաստ օրհնանքի խոսքն ասաց: Տարիներ հետո, երբ Գրիգոր Գուրզադյանը «դավաճանելով» իր մասնագիտություններին, կյանքում այլընտրանք ունեցավ, դարձավ նշանավոր, նորարարական միտումներով առլեցուն աստղաֆիզիկոս, մտորում էի այն մասին, թե արդյոք վարպետը գուշակո՞ւմ էր, թե հանձինս Գրիգորի ինչպիսի գիտնական է աշխարհ մտնելու: Իսկ ես, ինչ մեղքս թաքցնեմ, ամեն անգամ նրա գիտական հաջողությունների մասին տեղեկանալիս լիցքավորվում էի հպարտությամբ, իհարկե, ուսուցչի: Դրա շնորհիվ է կյանքը առաջադիմում, այլապես՝ տեղում պիտի դոփեր:

Ներկայիս հայ մտավորականության շարքում Գրիգոր Գուրզադյանն իր պատվավոր տեղը գրավելով, ոչ ոքի նման չէ, ինքը նման է միայն իրեն: Գիտելիքների աննախադեպ ընդարձակությամբ, խորապես պրպտող մտքով, մշտապես համարձակ եզրակացությունների, այլևայլ բնագավառներ ներխուժելու կարողությամբ և, իհարկե, ճշմարիտ հայրենասիրությամբ, նա առանձնակի տեղ է գրավում արդի մտավորականների շարքում իրապես՝ նմանը չունի: Գոնե ինձ այդպիսիք հայտնի չեն:

Ստորև վարանոտ փորձ եմ կատարում արժեքավորելու իր գրական վաստակը, իհարկե, առանց հավակնելու լիարժեքության, քանզի գրչիս կարողությունից վեր է: Ո՛չ նրա գիտելիքների լայնահուն ոլորտներին եմ տիրապետում, ոչ էլ

դրանց մեջ թափանցելու հեղինակի կարողությանը: Չեմ կասկածում, որ ով էլ որ ուզի դա անել, ինձ պես նույն դժվարության առաջ կկանգնի: Պատճառը՝ չափազանց ընդգրկուն են Գրիգորի «ներխուժած» բնագավառները, մեկը մյուսից տրամագծորեն տարբեր են: Չե՞ք հավատում: Թվարկեմ. աստղագիտություն, աշխարհագրություն, նավագնացություն, փիլիսոփայություն, բժշկություն, կենսոլորտի պահպանություն, մաթեմատիկա, ուժը՝ նաև ռեակտիվ, նյութի փոքրագույն մասնիկ՝ ատոմ, ատոմային էներգիա և ռումբ, լազերային և համակարգչային տեխնիկա, քաղաքականություն և պատմություն, դրա պարբերականացում, գիտության նորագույն նվաճումները, նույնիսկ՝ Մարքսի և Էնգելսի, նաև Դարվինի տեսակետների քննարկումներ: Թվարկումը կարելի է շարունակել, բայց բավարարվենք այսքանով, տեղ թողնելով միայն ճարտարապետությանն ու կերպարվեստին:

Վերը հիշատակվածներից բոլոր բնագավառները մատուցված են համաշխարհային ճանաչում ունեցող բազմաթիվ գիտնականների, գյուտարարների, պետական ու տարբեր բնագավառների գործիչների տեսակետների արհեստավարժ քննարկմամբ, ու դա կատարված է լեզվական հմտությամբ, սակայն հայերենի փոխարեն օտար բառերի հաճախակի գործածմամբ:

Հիրավի, մնում ես զարմացած. որքան ժամանակ է ծախսել Գրիգոր Գուրզադյանն ինքնազարգացմամբ զբաղվելու համար, ի՞նչ քանակությամբ գրականություն է «կլանել» ու «մարսել», որպեսզի կարողանա հասու լինել իր արծարծած բազում բնագավառներում, անվարան հանդես գալ ոչ թե որպես ամատյոր, այսինքն՝ սիրող, այլ համոզիչ իմացությամբ: Ահա, թե ինչու, տպավորությունս այն է, որ «Կաքավաբերդի առեղծվածը» գրքի հեղինակը հանրագիտարանային գիտելիքների տեր մտավորական է, հիրավի՝ քայլող հանրագիտարան:

Նախքան գրքի մասին գնահատանքի խոսքս ասելը, պարտքս եմ համարում շնորհակալությունս հայտնելու «Գարուն» ամսագրին ու նրա խմբագիր Լևոն Անանյանին, հայտնաբերելու համար Գրիգոր Գուրզադյանին որպես ինքնատիպ խոհագրի: «Գարունի» տարբեր համարներում տպագրված նրա խոհագրություններից է կազմվել «Տիեզերքը ափի մեջ» ու «Տիեզերքը ափի մեջ» ու «Կաքավաբերդի առեղծվածը» գրքերի ստվար բովանդակությունը:

Այս վերջին գրքի և վերը հիշատակված լրագրային հրապարակումների բովանդակության մեջ մեծ տեղ են գրավել ճարտարապետության և կերպարվեստի ստեղծագործությունների քննարկումները, որոնք հեղինակը կատարել է արվեստագետի խորաթափանցությամբ ու վերլուծություններով, թեև՝ առանձին դեպքերում վիճահարույց:

Քննարկվող գրքում հայկականը միայն «Կաքավաբերդի առեղծվածը» խոհագրությունն է, որով անվանվել է գիրքը: Բովանդակությունը առավել հարուստ է համաշխարհային քաղաքակրթության լայն ճանաչում ստացած եգիպտական, հռոմեական և իտալական վերածնության շրջանի ճարտարապետության և կերպարվեստի մեծագործությունների քննարկմամբ: Դրանց մասին հեղինակը ընթերցողին ոչ թե տարբեր արվեստագետների, այլ իր սեփական ընկալումներն է մատուցում: Նա քննարկման է ենթարկել եգիպտական բուրգերն ու տաճարները, հռոմեական ճարտարապետության այնպիսի հիասքանչ կոթողներ, որպիսիք են՝ Պանթեոն տաճարը, Կոլոսեոն կրկեսը, Տիտոսի և Կոստանդինի հաղթակամար-

ները, Դուքսերի պալատը Վենետիկում, Սանտա Մարիա դել Ֆիորե մեծազանգված տաճարը նաև դաստիարակության տունը Ֆլորենցիայում, թափանցել դրանց հեղինակների ստեղծագործական մեթոդների մեջ ու արժեքավորել իր ընկալումների դիրքերից: Ըստ որում, հեղինակը դա արել է տեղերում կատարած անձնական տպավորություններով, այլ ոչ թե ղեկավարվել արվեստագիտական գրականությունից քաղված տեղեկություններով:

Որպես ճարտարապետության պատմաբան, պարտքս եմ համարում խոսքս ասելու Գրիգոր Գուրզադյանի խորաթափանց ընկալումների ու անձնական գնահատականների կապակցությամբ: Յուրաքանչյուրում նկատելի է զուտ «գուրզադյանական» կեցվածքը՝ համեմված սրամիտ ածականներով: «Հանճարեղ անհեթեթություն» խոհագրությունում անդրադառնալով Վենետիկի Սուրբ Մարկոսի հրապարակի հարևանությամբ կառուցված Դուքսերի պալատին, նրա ճարտարապետությունը անհեթեթ համարելով (որովհետև հակառակ կառուցողական տրամաբանության՝ թեթևը, այսինքն՝ կամարասրահը, ներքևում է, իսկ ծանրը, այսինքն՝ խուլ պատերը՝ վերևում) եզրակացնում է. «Դոժերի պալատը ոչ այլ ինչ է, քան ճարտարապետական հանճարեղ թյուրիմացություն, եթե ոչ հանճարեղ անհեթեթություն»: Սակայն ստիպված է խոստովանել, որ «ինչ-որ դյութիչ, հիացնող բան կա այնուամենայնիվ այդ Դոժերի պալատ կոչեցյալի մեջ, հիացնող թեկուզ իր այդ անհեթեթություններով» (էջ 23-24):

«Տեսանելի պատկերը տիեզերքի» վերնագրով խոհագրությունում անդրադարձել է Հռոմի Պանթեոն տաճարին (էջ 82-88), կառուցման ժամանակը առաջ տանելով, վերնագրել է մ. թ. առաջին դարի սկզբին, իսկ որպես կառուցող հիշատակել է Օգոստոս կայսեր փեսա՝ Մարկոս Ագրիպային (այնինչ նա նախնական տաճարի կառուցողն է եղել), իրականում տաճարի կառուցումը կատարվել է 118-128թթ. Ադրիանոս կայսեր օրոք, հին աշխարհի մեծատաղանդ ճարտարապետ Ապոլոդորոս Դամասկացու մտահղացմամբ: Սակայն իմ դիտողությունը վերաբերում է տաճարի ճարտարապետության գնահատմանը: Թեև տաճարի հանդիսավոր արտաքին սյունասրահը իրոք շուք է պարգևում տաճարին, սակայն իրականում հիացմունքի արժանին տաճարի ներսույթն է: Հատկապես կլոր (տրամագիծը 43մ.) սրահի կեսոնապատ գմբեթը՝ պսակված կլոր (տրամագիծը՝ 9մ.) երդիկով: Հիրավի, դա ճարտարապետական սխրանքի համարման է արժանացել, դասվել հին աշխարհի կառուցողական մեծագործությունների շարքը:

Մի դիտողություն ևս. որպես ամենահինն է համարվել Հռոմի բաղնիքը՝ Թերմը, կառուցված Ագրիպայի կողմից, այնինչ ավելի հին է Պոմպեյի մոտակա Ստաբիայի բաղնիքը՝ կառուցված մ. թ. ա. 2-րդ դարում:

Չեմ ցանկանում մանրանալ՝ ևս մի քանի դիտողություններ անել ու ճշտումներ կատարել: Դրանք չեն էականը, այլ հեղինակի բացառիկ ջերմ, հիացական տպավորությունները տեսածից: Մեջբերում Կոլիզեումի մասին. «Կոլիզեում... Տպավորությունը առաջին անգամ տեսնողի վրա ցնցող է... Վիթխարի, հոյակապ մի տեսիլ, տիեզերքից իջած... անհնար է երևակայել դրանից ավելի վեհ բան... Քանի դեռ կա Կոլիզեումը, կլինի և Հռոմը» (էջ 80):

Եգիպտական Սֆինքսի մասին. «... Պատկերը ցնցող է, մարդ քարանում է, ինչ-որ վերերկրային, տիեզերական բան կա այդ հանելուկային հայացքի մեջ՝ այդ

ոչ պակաս հանելուկային բուրգի ուրվանկարի հետ միասին...» («Մի կարոտի պատմություն», էջ 214): Անդրադառնալով ճարտարապետության և շինարվեստի նվաճումներին, եզրակացնում է. «Հին հույները ստեղծեցին օրդերը՝ սյունը, հին հռոմեացիք՝ կամարը: Հին հույները հասկացան հմայքը սյուն-օրդերի, հին հռոմեացիք՝ վեհությունը կամարի: Իտալական Ռենեսանսը միացրեց այս երկուսն իրար՝ սյունն ու կամարը, ու բացվեց դարաշրջանը մի նոր ճարտարապետության՝ կամարակապ սյունաշարի: Գագաթնակետը եղավ Բրունելլեսկին: Կարելի է զարմանալ միայն, որ առաջին հայացքից այդքան պարզ ու այդքան հասկանալի միտքն ու գաղափարը ծնվեցին և կերպարանք ստացան այդքան դժվարությամբ ու այդքան երկար մարաթոնից հետո միայն»: («Կամարների սիմֆոնիա», էջ 42): Իսկ եգիպտական ճարտարապետության մասին հայտնում է հետևյալ կարծիքը. «Իր աներևակայելի բազմազանությամբ, ֆանտաստիկ ֆորմաներով, առասպելական կոմպոզիցիոն հնարքներով արդեն երևույթ է՝ տիեզերական ընկալումներ հավակնող...», («Մի կարոտի պատմություն», էջ 214):

Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարի մասին. «Կանգնած եմ քարացած. ժամանակ է պետք սթափվելու: Միտքս գործում է հաշվիչ մեքենայի արագությամբ: Դիմացս Սուրբ Պետրոսն է, իրական, շոշափելի, և մի հսկա պատմություն՝ դարերի խորքը հասնող և երբեք չսպառվող»: («Ակնթարթը գեղեցկության», էջ 108):

Ավելի զուսպ է նա Ֆլորենցիայի Սանտա Մարիա դել Ֆիորե տաճարի գմբեթի գնահատման հարցում. կարևորել է լոկ որպես կառուցողական նվաճում: «Այո, Ֆյորեի գմբեթը Բրունելլեսկի ինժեների հանճարն է: Բայց աստվածներն իրենց բագինը տվեցին Բրունելլեսկի ճարտարապետին: Բրունելլեսկի ճարտարապետի սխրանքը կամարն է» («Կամարների սիմֆոնիա», էջ 39):

Թույլ եմ տալիս ինձ Սանտա Մարիա դել Ֆիորե հսկայածավալ տաճարի գմբեթի գնահատման հարցում չհամաձայնել Գրիգորի կարծիքին: Այո, ճարտարագիտական առումով, իրոք, սխրանք է, նաև նոր խոսք գմբեթաշինության պատմության մեջ, սակայն դրա հետ միասին բարձր են գմբեթի ճարտարապետական գեղարվեստական արժանիքները: Ավելի լավ չես ասի, քան ասել է իտալական վերածնության վաղ շրջանի ճարտարապետության մի այլ վարպետ՝ Լեոն Բատիստա Ալբերտին. «Այդ գմբեթը զարթոնքի է կոչում տոսկանական բոլոր ժողովուրդներին»: Մեկ ուրիշ ժամանակակից՝ Բրունելլեսկու աշակերտ ճարտարապետ Միկելոցցոն ասել է. «... Գմբեթը, որով հիանում ենք, չէր կարող և չի կարող կառուցել ոչ ոք, բացի Ֆիլիպոյից»: Իսկ իտալական վերածնության մեծահանճար նկարիչ, քանդակագործ և ճարտարապետ, Հռոմի Սուրբ Պետրոս տաճարի հիմնական հեղինակ Միքելանջելո Բուանարոտին, երբ կանգնած է եղել տաճարի գմբեթի պսակը լուծելու խնդրի առջև խոստովանել է՝ «Չեմ ուզում կրկնել Ֆիլիպոյին, ավելի լավը չեմ կարող անել»:

Ահա այդպիսիք են սիրելի Գրիգոր, վերածնության մեծ վարպետների կարծիքները Ֆլորենցիայում Սանտա Մարիա դել Ֆիորե եկեղեցու գմբեթի ու նրա պսակի մասին: Դրանք Ֆլորենցիայի զարդն են, հաղթականորեն իշխող քաղաքի համայնապատկերում:

Ինչ վերաբերում է Ֆիլիպո Բրունելլեսկոյի «կամարասիրությանը», իրավացի ես, քանզի կամարաշարերի կիրառությամբ է նա հրաշագործել Դաստիարակչու-

թյան տան բակն ու կիր հրապարակը, Սանտա-Կրոչե տաճարի ներսույթը և ուրիշ շատ գործեր:

Ճարտարապետական հուշարձանները գնահատելիս Գրիգոր Գուրզադյանը նախ խորամուխ է եղել դրանց ստեղծման պատմությանը, ապա հանդես եկել մի քանի չափանիշների քննարկմամբ, որպես ճարտարագետ անդրադարձել է դրանց կառուցվածքային համակարգին, իսկ գլխավորապես՝ ճարտարապետա-գեղարվեստական ընկալումներին, իսկ մեծ մասամբ հմայված իր տեսածով, շարադրանքը լեցուն է հիացական բացականչություններով: Դրա վառ օրինակներ են Աշտարակի Կարմրավոր եկեղեցու և Պալմիրայի համալիրի մասին «ՀՀ» թերթում տպագրված խոհագրությունները:

Այս լրագրային հոդվածի կաշկանդիչ շրջանակները թույլ չեն տալիս դրանց անդրադառնալ հանգամանորեն: Հակիրճ տպավորությունս այն է, որ Կարմրավորին նվիրված խոհագրության մեջ Գրիգորը ջանացել է այնպիսի խորաթափանցությամբ վերլուծել հայ ճարտարապետության այդ նշանավոր հուշարձանի արժանիքները, որպիսիք չեն հանդիպում հորինվածքները վերլուծող նույնիսկ մասնագիտական աշխատություններում: Հատակագծային ու ծավալատարածական վերլուծության հետ միասին փորձել է լուսաբանել Կարմրավորի հարմոնիայի (ներդաշնակության) գաղտնիքները, լույս ու ստվերի դերը դրանում և հանգել այն ճշմարիտ եզրակացության, որ «Կարմրավորը կատարելություն է համաչափության և հարմոնիայի... հզոր է նրա գեղարվեստական ներգործությունը»:

Ինչ վերաբերում է Պալմիրայի հնավայրի մասին նրա շարադրանքին, ճիշտն ասած, երբ սկզբում աչքս ընկավ շրջանակի մեջ առնված «Պալմիրան անտիկ Հունաստանն է, ավելի վեհ, ավելի մոնումենտալ», փոքր-ինչ տարակուսեցի: Ինքս երկու անգամ եմ եղել Պալմիրայում, տարիներ շարունակ դրա մասին պատմել իմ ուսանողներին, ցուցադրելով տեղում կատարած իմ գունավոր սահիկները: Հնավայրի մասին շարադրանքը պատվավոր տեղ է գրավել իմ կողմից շարադրված «Հին աշխարհի ճարտարապետությունը» ուսումնական ձեռնարկում (որն այս տարի «Գեղեցիկի զարմանահրաշ քառուղիներում» խորագրով լույս տեսավ երկրորդ հրատարակությամբ): Ընթերցելով Պալմիրայի մասին խոհագրությունը, համոզվեցի, որ առաջին տպավորությունս սխալ էր: Գրիգորը լավատեղյակությամբ է ներկայացրել Սիրիական անապատներից մեկում գտնվող այս զարմանահրաշ հնավայրը: Նաբաթյան թագավորության օրոք ջրառատ օազիսում հիմնադրված այս քաղաք-սրբատեղին հռոմեացիների մերձարևելյան երկրները ներթափանցելու ժամանակաշրջանում Նաբաթյան թագավորության կործանումից ու Զենովբիա թագուհու գերեվարումից ու մահվանից (273թ.) հետո Պալմիրային տիրապետում են հռոմեացիք: Դիոկղետիանոս կայսեր օրոք (284-305թթ.) հիմնական վերակառուցման է ենթարկվում Պալմիրան, կառուցապատվում կանոնավոր հատակագծման սկզբունքներով, իսկ նրա մի կողմում տեղաբաշխվում է ռազմական ճամբարի ընդարձակ համալիրը: Ակնային ճանապարհների վերջում գտնվող Պալմիրան դառնում է Հռոմեական կայսրության ռազմավարական հզոր հենակետերից մեկը Մերձավոր Արևելքում: Հռոմեացիները ավելի վաղ, դեռևս 2-րդ դարի սկզբին, հիմնովին վերակառուցման են ենթարկել Ասորիքի հարավում գտնվող Բոսրա քաղաքը, կառուցել հասարակական կենտրոն՝ ֆորում, ձիարշա-

վարան, թատրոն: Առաջինների մնացորդները բացվել են պեղումներով: Բավականին լավ վիճակում պահպանած է թատրոնը: Հռոմեացիք կառուցողական հիշատակներ են թողել նաև Մերձավոր Արևելքի այլ երկրներում: Լիբանանում՝ Տյուրոս ծովափնյա քաղաքը, Բաալբեկի տաճարային ընդարձակ համալիրը, Բյուբլոս սրբատեղին և այլն, Հորդանանում՝ Ամմանի թատրոնը, Ջերաշ քաղաքը, Պատրայի ժայռափոր դամբարանները:

Չեմ կասկածում, որ եթե Գրիգոր Գուրզադյանը առիթ ունենար նաև այդ կողմերում լինել, կլիցքավորվեր նույնպիսի տվայտանքներով, ինչպիսիք՝ Պալմիրայում: Մեջ բերենք մի քանիսը:

«Առաջին տպավորությունը Պալմիրայից ցնցող է... Մարդ ակամա քարանում է իր հայացքին փռված տեսարանի առաջ... Մի պահ թվում է, որ ինքը հայտնվել է մի այլ մոլորակի վրա... Հետո հանդարտ, անշտապ, քայլել դեպի Հաղթական կամարը (դրանով ընդգծված է երկու փոխուղղահայաց սյունազարդ փողոցների խաչմերուկը, Վ. Հ.), որ հեռվից դեռ չի թողնում այնքան մեծ, այնքան վեհ տպավորություն, բայց երբ մարդ մոտենում է, վեր բարձրացնում հայացքն ու տեսնում կամարները երկնքի կապուտակի տակ... Միտքը դադարում է գործելուց»: Իրավացի է Գրիգորը, նույնպիսի զգացումներով ինքս եմ համակվել, հիացել քաղաքաշինական հանդիսավոր միջավայր ստեղծելու հռոմեացիների բարձր, հին աշխարհում անգերազանցելի վարպետությամբ: Այդ է պատճառը, որ Գրիգորն իր այս ուշագրավ խոհագրությունն ավարտում է. «Չլիներ Պալմիրան, այս երկիր կոչված հողագնդից ու տիեզերքից նաև ինչ-որ բան կպակասեր անշուշտ...»:

Ինչ վերաբերում է «Լեոնարդո դա Վինչին Հայաստանո՞ւմ» խոհագրությանը, որում քննարկվում է իտալացի հանճարեղ նկարիչ, ճարտարապետ ու գյուտարար, նաև բանաստեղծ Լեոնարդո դա Վինչիի Հայաստանում լինելուն ու վաղ միջնադարում (ոչ թե Բագրատունյաց շրջանում) կառուցված Բագարանի տաճարին ծանոթ լինելուն, որին առաջներում անդրադարձել են գերմանացի գիտնական Ռիխտերը, ամենագետ Ալիշանը, «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» (գերմաներեն լույս տեսած 1918-ին) երկհատոր մենագրության հեղինակ Ժոզեֆ Ստրժիգովսկին, Կոստան Զարյանը, վերջերս նաև նրա որդի՝ Արմեն Զարյանը («Հայ ճարտարապետության տարածումը և Լեոնարդո դա Վինչիի հայկական վարկածը», Երևան, 1994), ինչպես ասվում է՝ «շատ ջուր վերցնող» գիտական խնդիր է:

Գրիգորը, հենվելով Արմեն Զարյանի կարծիքի վրա, նախ ընդգծում է Բագարանի տիպի եկեղեցու հորինվածքի սերումը հայկական ժողովրդական բնակելի տան՝ գլխատան, ավանդույթից. նաև հայ ճարտարապետ ու քարագործ վարպետների եվրոպական երկրներում գործելու վերաբերյալ ստույգ տեղեկություններից, հարում է այն եզրակացությանը, համաձայն որի՝ Լեոնարդոն ծանոթ է եղել ոչ թե Բագարանի տաճարին, այլ դրա ճիշտ կրկնակին՝ Միլանի Սան Սատիրո եկեղեցուն: Դրա հիման վրա նշում, որ «Հիմա բոլոր իտալացի (ոչ միայն իտալացի) ճարտարապետներն ու հետազոտողներն էլ են այն հարցում միակարծիք»:

Իր կարծիքները հայտնելիս՝ Գրիգոր Գուրզադյանը երբեմն հրապուրվում է ծայրահեղություններով: Այդպես են հնչում նրա հետևյալ տողերը. «Սեփական հայտնագործություններ Հռոմը չունեցավ. սյունը, օրդերը նա վերցրեց հույներից,

կամարը՝ էտրուսկներից (որոնք հռոմեացիների նախնիներն էին, ինչպես ուրարտացիները՝ հայերի, Վ. Հ.), իսկ Բագարանատիպը՝ հայերից»: Երևի զգալով իր սայթաքումը, հաջորդ տողերում արժանին է մատուցում հռոմեական շինարվեստին ու ճարտարապետական նվաճումներին, սակայն՝ ոչ լրիվ:

«Կաքավաբերդի առեղծվածը» գրքի ու վերը հիշատակված լրագրային խոհագրությունների հիմնական թեման ճարտարապետությունն է, տարբեր երկրներում իր տեսած մեծագործությունները, որոնց ուղղված են Գրիգոր Գուրզադյանի հիասքանչ գնահատականները: Չափազանցում է: Բնավ: Ուղղակի ճիշտ է ըմբռնել հին հույների կարծիքը, համաձայն որի՝ «ճարտարապետությունը բոլոր արվեստների մայրն է»:

Գեղանկարչական արվեստին նվիրված նրա խոհագրությունները բնութագրվում են առավել համարձակ դիտարկումներով ու խորաթափանցությամբ: Դրանով լի են թե՛ իտալական, թե՛ հայկական արվեստին նվիրված շարադրանքները: Բացառիկ հետաքրքրությամբ են ընթերցվում նրա շարադրանքները՝ նվիրված Լեոնարդո դա Վինչիի «Ջոկոնդա» դիմանկարին ու «Խորհրդավոր ընթրիք» որմնանկարին: Նկատելի է ձգտումը՝ բացահայտելու ներկայացվածների հոգեվիճակը, գաղափարաբանությունը, հորինվածքային կառուցվածքն ու գունանկարչական մեկնաբանումները:

Ինչ վերաբերում է Հարություն Կալենցին ու Մինասին նվիրված շարադրանքներին, ապա դրանցում Գուրզադյանն իր կատարյալ տարերքում է: Նա արհեստավարժությամբ է թափանցում նրանց ստեղծագործության գաղտնիքները, բացահայտում յուրաքանչյուրի հավատամքը:

Հարություն Կալենցին նվիրված «Խրախճանք գույների» շարադրանքում (էջ 325) նշում է, որ գույնի աշխարհը Կալենցի ողջ էությունն է եղել, գույնի ֆանտաստիկ զգայողությունը: Գույնի միջոցով գեղեցկության բարձրագույն կետին հասնել: Կարողանալ այդքան արև ու այդքան լույս դնել կտավի վրա... Բոցկլտացող, հուրհրացող, գույները կարծես դուրս են թռչում նրա կտավներից...»:

Վիճահարույց եմ համարում գրքի հեղինակի «Բայց այսօր աշխարհի դատին երևի թե երեք անուն, երեք հանճարեղ անուն կարող ենք դնել անվարան» կարծիքը: Ժլատ չէ՞ արդյոք: Չէ՞ որ աշխարհի դատին ներկայացնելու արժանի ուրիշ անուններ ևս ունենք: Երևի իմ այս կարծիքին համամիտ եղողների թիվը փոքր չէ:

Գիրքն ավարտվում է Մինասի արվեստին նվիրված խիստ սեղմ «Մինաս...» շարադրանքով (էջ 333): Իրավացիորեն նշելով, որ հայ կերպարվեստի հանրաճանաչ վարպետից՝ Մարտիրոս Սարյանից դասեր առնողների թիվը մեծ է եղել, սակայն դրանք մեծ մասամբ հանդես են եկել որպես էպիգոններ, Գ.Գուրզադյանը նշում, որ Մինասը սկզբում նույնպես հրապուրվել է Սարյանի ստեղծագործությամբ: «Սարյանը նրա Աստվածն էր, ինչպես ողջ դասականը, այն տարբերությամբ միայն, որ ի վերջո Մինասը դարձավ Մինաս»: Սա, իհարկե, միանգամայն ճշմարիտ գնահատական է: Ափսո՜ս, շատ ափսո՜ս, որ կերպարվեստի շռայլատաղանդ ու ինքնատիպ վարպետին չվիճակվեց բազմապատկել իր ստեղծագործական ավանդը ժամանակակից հայ կերպարվեստում:

Գրիչս վայր եմ դնում՝ խոստովանելով, որ նպատակադրվել էի հանձն առնել մի շատ դժվարին պարտականություն: Դույզն չափով բնութագրել աստղաֆիզի-

կոս Գրիգոր Գուրզադյանի, իմ հիմնական մասնագիտության հետ չառնչվող հրապուրանքը՝ խոհագրությունը, որն իմ համոզմամբ երևույթ է մեր արդի խոհագրական գրականության մեջ, ինչպես նաև հեղինակը՝ Գրիգոր Գուրզադյանը: Հաջողվե՞լ է արդյոք դա ինձ. դատելու իրավունքը ընթերցողինն է:

«Հայաստանի Հանրապետություն»,
13 հուլիսի, 2000թ.



Գրիգոր Գյուրզադյանն ու կինը՝ Մարիանան, «Կոսմոս» թանգարանում



«Կոսմոս» թանգարանը Գառնիում